ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N127-Ա
25 օգոստոս 2021թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱԲՈՒՅՆՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՄԵՍՐՈՊ ԲԱԲԱՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով,16-րդ հոդվածի 1-ին մասի 1.5-րդ կետով, 3-րդ մասի ա) կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 3-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգը հաստատելու մասին» թիվ 319-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Մեսրոպ Բաբայանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2021 թվականի օգոստոսի 26-ից Հայաստանի Հանրապետության «Վայոց ձորի մարզի Արտաբույնքի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Մեսրոպ Բաբայանի լիազորությունները դադարեցնել՝ լուծել նրա հետ կնքած 2016 թվականի նոյեմբերի 1-ի N321 աշխատանքային պայմանագիրը:
2. Հայաստանի Հանրապետության «Վայոց ձորի մարզի Արտաբույնքի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի

պարտականությունների կատարումը դնել նույն դպրոցի զինղեկ Վարդան Մելիքսեթյանի վրա:

3. Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի ու ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչություններին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել հանձնման-ընդունման աշխատանքները՝ համաձայն հավելվածի:

8/25/2021

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2021թ օգոստոսի 25-ի
N127-Ա որոշման

«ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱԲՈՒՅՆՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Հանձնաժողովի նախագահ՝

Հովհաննիսյան Աղասի	ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ

Անդամներ՝

Մաղաքյան Նարինե	ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ
Սաֆարյան Աննա	ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր տնտեսագետ